ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/184

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.11.2018թ. թիվ 27/26-3/21691-18 գրությամբ «Մոսէսքո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի 19.11.2018թ. թիվ 31-671 գրության հիման վրա, 27.11.2018թ. թիվ 27/26-3/21691-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Մոսէսքո» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մոսէսքո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մոսէսքո» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Ընկերությունը մասնակցել է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև՝ Աճուրդ) և մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 27.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.2 կետի համաձայն՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ (Հավելված 1) անհամապատասխանություն է արձանագրվել (չափաբաժինները նշվել են ոչ բոլոր մասերով):

Նույն արձանագրության 5.1-րդ կետի համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով առաջարկելով մինչև 29.10.2018թ. շտկել սույն արձանագրության 3.2 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Այնուհետև, Աճուրդի գնահատող հանձնաժողովի 29.10.2018թ.տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2-րդ կետի համաձայն՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից վերը նշված ժամկետում փաստաթուղթը չի շտկվել:

Նույն արձանագրության 3.2-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Մոսէսքո» ՍՊԸ-ն մասնակցել է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/29»

ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Այնուհետև՝ Աճուրդի գնահատող հանձնաժողովի 27.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.2 կետի համաձայն՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ (Հավելված 1) արձանագրվել է անհամապատասխանություն (չափաբաժինները նշվել են ոչ բոլոր մասերով):

Նույն արձանագրության 5.1-րդ կետի համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ որոշվեց կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով մինչև 29.10.2018թ. շտկել սույն արձանագրության 3.2 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Այնուհետև, Աճուրդի գնահատող հանձնաժողովի 29.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2-րդ կետի համաձայն՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից վերը նշված ժամկետում փաստաթուղթը չի շտկվել և որոշել է մերժել «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը:

Ընկերությունը հայտնել է, որ eauction.armeps.am համակարգի միջոցով «Մոսէսքո» ՍՊԸ-ն չի ստացել համապատասխան արձանագրություն և/կամ ծանուցումը՝ արձանագրված անհամապատասխանության և վերոհիշյալ անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Ավելին, «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին դիմում-հայտարարություն ներկայացնելուց հետո 27.10.2018թ.-ին «Մոսէսքո» ՍՊԸ-ի ներկայացուցիչը կապ է հաստատել Պատվիրատուի հետ և փորձել ստանալ տեղեկատվություն «Մոսէսքո» ՍՊԸ-ի առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու վերաբերյալ: Արդյունքում «Մոսէսքո» ՍՊԸ-ի ներկայացուցիչը տեղեկացվել է, որ ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ (Հավելված 1) արձանագրվել է անհամապատասխանություն (չափաբաժինները նշվել են ոչ բոլոր մասերով):

Հաջորդ օրը՝ 28.10.2018թ. «Մոսէսքո» ՍՊԸ-ն eauction.armeps.am համակարգի միջոցով ուղարկել է շտկված փաստաթուղթը, սակայն համակարգի միջոցով ֆայլը կցել չի հաջողվել (Ընկերության կամքից անկախ հանգամանքներով):

«Մոսէսքո» ՍՊԸ-ի ներկայացուցիչը նորից փորձել է կապ հաստատել Պատվիրատուի հետ, որպեսզի հայտնի առաջացած խնդրի վերաբերյալ և հայտնի այն մասին, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ն պատրաստակամ է դիմում-հայտարարության մեջ Հավելված 1-ի շտկված տարբերակը Պատվիրատուի էլ. հասցեին ուղարկելու մասին, սակայն կապ հաստատել հնարավոր չի եղել (եղել է ոչ աշխատանքային օր):

Այնուամենայնիվ, «Մոսէսքո» ՍՊԸ-ն հաշվի է առել այն հանգամանքը, որ եթե մինչև 29.10.2018թ. չներկայացնի պահանջվող շտկված Հավելված 1-ը, արդեն իսկ բաց կթողնի Կարգի 41-րդ կետով շտկման համար սահմանված մեկօրյա ժամկետը՝ Հավելված 1-ի շտկված տարբերակը ուղարկել է Պատվիրատուի էլ. հասցեին՝ hhrc.gnumner@tna.am, 28.10.2018թ. ժամը 19:46-ին:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել այն հանգամանքը, որ անհասկանալի և կասկածելի պայմաններում gnumner.am համացանցային կայքում հրապարակված չէ «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի ոչ թիվ 2, ոչ թիվ 3 և ոչ էլ թիվ 4 արձանագրությունները, ավելին «Մոսէսքո» ՍՊԸ-ն լինելով հետևողական և պարտաճանաչ ընկերություն, կարծես թե ինքն է ստանձնել Պատվիրատուի պարտականությունները և ճշտելով արձանագրված անհամապատասխանության մասին, իրականացրել է հնարավոր բոլոր քայլերը՝ շտկված Հավելված 1-ը Պատվիրատուին ուղարկելու համար և համակարգի թերացման պատճառով այն ուղարկել է Պատվիրատուի էլ. հասցեին: Արդյունքում այդպես էլ gnumner.am համացանցային կայքում չհրապարակելով «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ն ենթադրել է, որ գնահատող հանձնաժողովը գնահատել է էլ. հասցեին ուղարկված շտկված Հավելված 1-ը: Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և Ընկերության դրսևորած վարքագիծը՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ին չվերագրել

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Մոսէսքո» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/184 ընթացակարգի շրջանակներում 30.11.2018թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.11.2018թ. թիվ 31-671 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասնակից «Մոսէսքո» ՍՊԸ-ի ներկայացրած էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ (Հավելված 1) արձանագրվել է անհամապատասխանություն, դիմումով հայտագրված չափաբաժինների քանակը չի համապատասխանում համակարգ ներբեռնած չափաբաժինների քանակին:

Կարգի 41-րդ կետի համաձայն նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում փաստաթուղթը չի շտկվել, հայտը գնահատվել է անվաբարար և մերժվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/184 ընթացակարգի շրջանակներում 30.11.2018թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/184 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/184 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար

կազմակերպվել է «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Աճուրդ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մոսէսքո» ՍՊԸ-ն:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 27.10.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.2-րդ ենթակետի համաձայն՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ (հավելված 1) արձանագրվել է անհամապատասխանություն (չափաբաժինները նշվել են ոչ բոլոր մասերով):

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Աճուրդի գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով «Մոսէսքո» ՍՊԸ-ին մինչև 29.10.2018թ. շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

3. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 29.10.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չի շտկվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.11.2018թ. թիվ 27/26-3/21691-18 գրությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի 19.11.2018թ. թիվ 31-671 գրությունը և կից փաստաթղթերը, «Մոսէսքո» ՍՊԸ-ի դիրքորոշումը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 3-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով սույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

Կարգի 11-րդ կետի համաձայն՝ հրավերով նախատեսվում են նաև, որ՝ մասնակցի հայտը ներառում է միայն գնային առաջարկը: Ընդ որում, մասնակիցը գնային առաջարկ կարող է ներկայացնել, եթե բավարարում է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջները: Գնային առաջարկը ներկայացնելը համարվում է սույն ենթակետով նախատեսված պահանջներին մասնակցի տվյալների համապատասխանությունը հավաստող հայտարարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Նույն կարգի 41-42-րդ կետերի համաձայն՝

41. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մոսէսքո» ՍՊԸ-ն:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 27.10.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.2-րդ ենթակետի համաձայն՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ

(հավելված 1) արձանագրվել է անհամապատասխանություն (չափաբաժինները նշվել են ոչ բոլոր մասերով):

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Աճուրդի գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով «Մոսէսքո» ՍՊԸ-ին ***մինչև 29.10.2018թ.*** շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 29.10.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չի շտկվել:

«Մոսէսքո» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ eauction.armeps.am համակարգի միջոցով ուղարկել է շտկված փաստաթուղթը, սակայն համակարգի միջոցով ֆայլը կցել չի հաջողվել (Ընկերության կամքից անկախ հանգամանքներով):

Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտնել է, որ վերջինս Հավելված 1-ի շտկված տարբերակը 28.10.2018թ. ժամը 19:46-ին ուղարկել է Պատվիրատուի hhrc.gnumner@tna.am էլ. հասցեին և ներկայացրել է նշված փաստը հաստատող «mosesco@rambler.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Աճուրդի հրավերի 7-րդ կետի 7.9-րդ ենթակետով նախատեսվել է, որ Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ընթացքում դիմում-հայտարարությունների գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե արձանագրվում են անհամապատասխանություններ սույն հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ

հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե սույն ենթակետով սահմանված ժամկետում մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «mosesco@rambler.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը՝ արձանագրում եմ, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ն ***28.10.2018թ. ժամը 19:46-ին*** «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերում նշված «hhrc.gnumner@tna.am» էլեկտրոնային հասցեին ուղարկել է Աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության շտկված տարբերակը:

Չնայած այն հանգամանքին, որ Ընկերությունը ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով նախատեսված մեկ աշխատանքային օրյա ժամկետում eauction.armeps.am համակարգի միջոցով չի ուղարկել դիմում-հայտարարության շտկված տարբերակը, այնուամենայնիվ արձանագրում եմ, որ Ընկերությունը նշված փաստաթղթի շտկված տարբերակը սահմանված ժամկետում ուղարկել է Աճուրդի հրավերի մեջ նշված Պատվիրատուի «hhrc.gnumner@tna.am» էլեկտրոնային հասցեին: Նման պայմաններում գտնում եմ, որ Ընկերությունը «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում կատարել է համապատասխան գործողություններ ուղղված շտկված փաստաթուղթը գնահատող հանձնաժողովին ներկայացնելուն: Ուստի գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.11.2018թ. թիվ 27/26-3/21691-18 գրությամբ «Մոսէսքո» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04214892) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**